Արձանագրություն 7

**Էջմիածին ջրօգտագործողների ընկերության կարիքների համար «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովիարտահերթ նիստի**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 25.05.2021թ. ժամը 16:30-ին:

*Հանձնաժողովի նախագահ*

Կարապետ Տեր-Խաչատրյան- Էջմիածին ջրօգտագործողների ընկերության տնօրենի տեղակալ

*Հանձնաժողովի անդամներ*

Արսեն Անտոնյան - Էջմիածին ջրօգտագործողների ընկերության շահագործման բաժնի պետ

Նարեկ Ստեփանյան - Էջմիածին ջրօգտագործողների ընկերության գլխավոր էներգետիկ

*Գնումները համակարգող՝*

Նարինե Տիգրանյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Անի Ակունցը:

**Օրակարգ**

**Բանակցությունների վերաբերյալ**

«Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կողմից կազմակերպված «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից էր ճանաչել «ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ-ն, որին սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո՝ 2021թ. մայիսի 10-ին, առաջարկվել է կնքել համապատասխան պայմանագիր, սակայն օրենքով սահմանված ժամկետում (10 աշխատանքային օր) «ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ-ի կողմից պայմանագիրը չի հաստատվել և ներկայացվել պատվիրատուին, ուստի գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. «ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիրը ստորագրելու իրավունքից և վերջինիս հետ կապված վերոնշյալ ընթացակարգի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ուղղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ օրենքով սահմանված կարգով հետագա գործողություններ ձեռնարկելու համար,

2. «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կողմից կազմակերպված «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման՝ ընթացակարգի շրջանակներում 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ին և վերջինիս սահմանված կարգով առաջարկել կնքել՝ համապատասխան պայմանագիր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0*

| | | |
|---|---|---|
| Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ | | Կ. Տեր-Խաչատրյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | | Ա. Անտոնյան |
| | | Ն. Ստեփանյան |
| Գնումները համակարգող | | Ն. Տիգրանյան |